զի հայցեմք գրել առ մեզ՝ եթէ հնար է, զնահատակութիւն երանելւոյ նահատակին այնմիկ. թէ ո՞րպէս հալածեցաւ, և կալեալ եղև. թէ ո՞րպէս ի բանտ արկաւ. և զի՞նչ էին անուանք նոցա։ Թէ ո՞րպէս յատենի կացուցաւ. և զի՞նչ խօսեցաւ, և ո՞րպէս ամբաստանեցաւ և ի մահ վճռեցաւ. ո՞յք էին դատախազք նորա. և զի՞նչ անուանք նոցա. և թէ ո՞րպէս պատուհասեցան և կորեան։ Թէ ո՞րպէս զլխատեցաւ. և զի՞նչ խօսեցաւ ի ճանապարհին. և զի՞նչ ընդ զլխատիլն. և թէ զի՞նչ հանդիպեցաւ զկնի մահուան նորա. և ո՞րպէս թաղումն նորա, և այլն ամենայն։ Եւ զայս վասն այնորիկ խնդրեմք ի ձէնջ, զի դուք ժամանակակից էք նորա, և կենցաղավարեալ ընդ նմա. մանաւանդ խոստովանահայր ևս էր հանւոյ իմոյ խօնճայ խաթունին, որ զբազում ինչ գիտէ զնմանէ, թէ նախ քան զնահատակութիւն նորա և թէ զկնի, յորմէ կարէք տեղեկանալ. և ոչ միայն ի նմանէ, այլ և յայլոց բազմաց, որք են ժամանակակիցք նորա։ Ուստի հարցէ՛ք ի նոցանէ. և տեղեկացեալ բարւոք ստուգեալ, գրեցէք առ մեզ, որպէս զի յօգուտ մեր և ի պատիւ երանելւոյ նահատակին՝ բարւոք գրեալ՝ պահեսցի. զի և զկնի մեր եկեալքն ընթերցեալ օգտեսցին, և զԱստուած օրհնեսցեն, որ ետ նմա զայնպիսի յաղթութիւն, և մի՛ յանծանօթս ամփոփեսցի հրաշալի նահատակութիւն երանելւոյն կոմիտասայ վկային։....

Ազնուամեծարութեան ձերում մեամ
Ցամենայնի պատրաստական
Նուաստ ծառայ Հայր Մկրտիչ

Ցամի Տեառն 1740
Ցուլիս 19
[Ս. Ղազար]

ՂԸ.

Զմմառեան Հայ Վանքին պատմութեան մասին յոյժ շահեկան վաւերաթուղթ մը կը հրատարակենք ստորև։

Կը գտնենք նախ և առաջ Խաչատուր վարդապետի մահուան լուրը։ Նամակագիրը Նիկողայոս վարդապետ՝ իր ժամանակի կրօնական վէճերու շրջանէն մէջ բերելով կ'ըսէ, թէ «տէրն մեր Աբրահամ վարդապետ էջ ի լեռնէն ի հալապ» և այլն, և կը վիճակագրէ նոյն ատենի մէկ շրջանը։ Աբրահամ Հալէպի եպիսկոպոսն էր, բայց հալածանաց պատճառաւ Լիբանան քաշուած էր և անկէ կը կառավարէր իր թեմը, ապա կ'ընտրուի Ուղղափառ Հայոց Առաջին Դիտապետ «Աբրահամ Պետրոս Ա. Պատրիարք Տանն Կիլիկիոյ» տիտղոսով։

Կարևորագոյնը սակայն վաւերաթուղթիս այն առաջին մասն է՝ ուր յիշեալ նամակագիրը — Զմմառեան Ուխտին Առաջիկայ վարդապետներէն մին — կը ներկայացնէ իր Միաբանութեան սկզբնական կազմակերպութեան շրջանը։ Թուղթը գրուած և ուղղուած է ի Ս. Ղազար առ Մխիթարեան վարդապետ մը, որպէս զի սա միջնորդէ Մխիթար Աբբայի առջև, յանձն առնելու անոնց ևս ըլլալու «Ընդհանրական Մեծաւոր», և բաց աստի՝ «զով ոք յիւրոց կրօնաւորաց վարդապետաց տեսցէ, արասցէ.. մեծաւոր» Զմմառու վանքին, խոստանալով նաև՝ որ այդպարագային պիտի կատարեն անոր առջեւ իրենց ուխտը, որուն պատճէնը հետագայ նամակին կցուած է։ Կը հաղորդէ միանգամայն, որ եթէ Մխիթար Աբրահայը չզիջանի անոնց աղերսին՝ վախ կայ որ առանց կարծեաց իւրաքանչիւր ոք երթայ «յայլ կրօն։ Ոմանք առ կրօնս հոռոմոց, ոմանք առ հայոց. ոմանք առ Ֆռանկաց. և ոմանք առ Մարոնոց»։

Թէ ինչո՛ւ Մխիթար յանձն չէ առած։ Սոյն առաջարկին ահա այս է իր պատասխանը. «Ցաւիմք զի ոչ կարեմք կատարել։... Քանզի կանոն և կացութիւն մեր « հրաման տայ մեզ ի կրօնս մեր ընդունել զայնոսիկ, որք ի պատշաճաւոր հասակի